ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» նոյեմբերի 2025թ. № 1143

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2025» ՄՐՑԱՇԱՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ Լ. Գրիգորյանի զեկուցագիրը, Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի N 1046 որոշմամբ հաստատված «Սպիտակ համայնքի ղեկավարի շախմատի առաջնություն-2025» մրցաշարի կանոնադրության համաձայն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնականներ զբաղեցրած և «50+» տարիքի լավագույն երեք արդյունք ցուցաբերած մասնակիցներին դրամական պարգևատրման նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից (սպորտային պարգևներ)» 4727 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 540 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 14
ք.Սպիտակ